



ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 175

28 ՆՈՅԵՄԲԵՐ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԵՍ ԵՄ
ԶԵՆԱՆ
ՏՈՐԻՄ



ՏՕՒԱՑՈՅՑ

Նոյեմբեր	29	†	Կիր.	դ.կ	Գ. Յիսնակաց:
	30		Բշ.	աձ.	Ս. առաքելոցն Բարբողիմէոսի եւ Յուդայի:
Դեկտեմբեր	1		Դշ.	ակ.	Ս. Գեմասիոսի եպիսկոպոսին եւ Մերկիւռիոսի զինաւորին: Եւ Ս. վկայիցն Յակովբայ եւ Իրաւափառայ:
	2		Դշ.	բձ.	Պահոց:
	3		Եշ.	բկ.	Ս. Հարցն Եգիպտացւոց՝ Պօղոսի Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յովհաննու կարճանասակին, Նեղոսի, Աբսէնի, Սիսիանու, Դանիէլի, Սրապիոնի, Մակարիոսի, Պիմէնի եւ այլոց սրբոց:
	4		Ուր.	գձ.	Պահոց:
	5		Շք.	գկ.	Սրբոյն Նիկողայոսի Զմիւռնացւոյ սփանչեղազորձ հայրապետին:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹԵՐԹ

Զորրոդ սարի Թ 28 Նոյեմբեր 1914 Թիւ 175

«Մերական Բանականայական Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Առնագանգ շաբաթները շա-
ռնակէ Հայաստանի կաթողիկէ Ժ զոմարոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
արել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերական Հայրն սրտազին կ'օրհնէ յիշեալ Շաբաթները, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մէրի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեոքան Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ,
28 Նոյեմբեր 1912, ընդ 60780 քուսմամբաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐ

ՏԵՂԱՊԱՀԻ ԽՆԴԻՐ

(Շար. եւ վերջ)

Նախկին երկու յօդուածներով¹ սոսկ
աշխարհային գործոց համար՝ Օսմ. Կա-
ռավարութեան հրամանաւ ու տրամա-
դրութեամբ, Տեղապահ Եպիսկոպոսի մը
ընտրութեան խնդրոյն մէջ շուրջ տա-
րիէ մը ի վեր անցած դարձածը ման-
րամասնօրէն պարզեցինք. որպէս զի
յայտմ մասին առ հասարակ կըրնին ու
եկեղեցական իշխանութեան ձրիաբար

վերադրուած ամբաստանութիւններուն
որչափ անտեղի և անիրաւ ըլլալը ցոյց
տանք:

Արդ, քանի որ այս արտակարգ պա-
րագաներուն և անկանոն վիճակին մէջ
Տեղապահի ընտրութիւնը առաջին ան-
գամ առաջարկողը և անոր պայմանները
կարգադրողը Կառավարութիւնն եղաւ,
հետեւաբար Կառավարութեան կ'իյնար
անոր գործադրութիւնն ալ եւ այսպէս
ալ եղաւ:

Իրաւ է որ բարեացակամները, մա-
նաւանդ անոնք որ այլ եւս կը զգային
թէ այս անհեղեղ և աննախընթաց կա-
ցութիւնը՝ մահացուցիչ է հասարակու-
թեանս համար, սիրով կը յօժարէին օր

¹ Թիւ 170 և 171:

առաջ լինեցին այս ընտրութիւնը. սակայն և այնպէս հակառակեցաւ ծանօթ խմբակը, և ոգորեցաւ՝ ոգի ի բռին, արգիլելու համար զայն՝ ամէն զնով, նոյն իսկ ապօրինաւոր միջոցներով և խորհրդակցութիւններով. ա՛յն խմբակը՝ որ գործած ու գործել տուած էր ամէն ապօրինութիւն ու սրբապղծութիւն, և որ հիմա՝ այս ընտրութեան մէջ, կը նախատեսէր իր ծրագիրներուն քայքայումը, իր գոյութեան իսկ անգարմանելի վտանգումն ու ոչնչացումը։ Բայց Օրէնքին առջև չխաջախուեցաւ չորակամ յամառութիւնը, շահախնդիր պայքարը և յանդգնութիւնը։ Այս ի՛նչ ցաւալի հոգեկան վիճակ, ցաւալի՝ որովհետեւ հակակաթողիկէական և միանգամայն ազգակործան, որ իր շահու և կրից տեսակէտէն՝ աւելի կ'ուզէ հասարակութիւնը կործանած տեսնել, քան կանոնաւոր վերականգնացման մը արշալոյսը ողջունել։ Թո՛ղ վերջապէս տեսնեն բարի և պարտաճանաչ կաթողիկէներն ու սորվին թէ՛ ո՛ւր կը յանգի եկեղեցական իշխանութեան դէմ ըմբոստութիւնը, կրօնազուրկ ազգասիրութիւնը, հակառակամարտ վրիժառութիւնը. կը քամուի, կը զտուի, կը յանգի ի միտը, չկաթողիկէ սկզբունքներով առլի։

Սակայն յաղթանակեց Օրէնքը։ Ի հեճուկս այն ձգձգումներու, անմեկնելի յապաղումներու, չկամութիւններու, և նաեւ ի հեճուկս այն մասնաւոր դիմադարձութիւններուն՝ որոնք ծնունդ էին անձնական շահերու նկատողութեանց, որով կ'ուզուէր հասարակութեան այս անկերպարան մանուսնդ թէ քայքայուած և ի կորուստ դիմող վիճակը շարունակել ի հեճուկս այս ա-

մէնուն, Կառավարութիւնը հաստատակամ պնդեց, հրամայեց և այս օրինաւոր քայլը պարտադրեց։

Ուստի միանգամ ընդ միշտ հաստատակութիւնս կ'ազատուի այս աննախընթաց և անհեղեղ դրութենէն, որով իրեն աշխարհային վարչութիւնը՝ հանգէպ Օսմ. Կառավարութեան, կը մնար սոսկ աշխարհականներու ձեռքը։ Հիմա, դոնէ մինչեւ մէկ աստիճան, օրինաւոր կապութիւն մը պիտի ունենանք, մինչեւ որ բոլորովին ուղղուի այն, և խաղաղութիւնն ու համերաշխութիւնը վերջնականապէս հաստատուին, և բարձուին ի միջոյ ահաւոր գալթակալութիւնները, սրբապղծութիւնները, յաւակնութիւններն ու հոգւոց կորստեան միայն ծառայող ըմբոստութիւններն ու ընդվզող մեները։ Հիմա, անզգալապէս սպրդող անկրօնութեան կամ անխորականութեան դէմ կարելի պիտի ըլլայ թումբ մը կանգնելու աշխատիլ, և անզուսպ ազատականութեան և շահամոլ կուսակցականութեան շահատակութիւնները կասեցնել։

Նոյն այդ ընտրութեամբ, որ Կառավարութեան բարի կամեցողութեամբ կը յաջողի, վերջ պիտի դրուի նաեւ ապօրինի ժողովներուն, որոնց միջոցաւ բռնի ուզուեցաւ յաղթանակ կանգնել տալ ժողովրդապետական սկզբունքի (կուսակցական բառով), այս ինքն է՝ աշխարհականացումի, որ կը մերժէր և իբր՝ խոտելի քանակութիւն, առ ոչինչ կը դրէր եկեղեցական ամբողջ դասակարգը և նուիրապետութիւնը։

Նոյն ինքն Կառավարութեան սուած կորովի սրամազութիւնները այս տեսակ ժողովներու անզօր և ոչինչ ըլլա-

լուն ապացոյցը տուին, քանի որ ապօրինի ժողովը՝ որ իւրացնել կ'ուզէր նաև Տեղապահի այս ընտրութեան իրաւունքը, առ ոչինչ գրուեցաւ, ինչպէս նախապէս ալ յայտարարած էր Արգարութեան և Կրօնից նախարարը թէ ՈԶԻՆՁ էր այս ժողով ըսուածը (ֆեյեննէյէն և ֆիւն Բիւքսիսէ)։ այլ Կառավարութիւնը ինքնին նշանակեց Ընտրական Աւագանւոյ ժողով մը և անոր պարտադրուեցաւ Կրօնական ժողովոյ ընտրելիին ներկայացուիլը։

Այսքան չարեաց առջեւն առած ըլլալը մեծ յաջողութիւն պէտք է համարուի, որ, ինչպէս կը յուսանք Աստուծոյ գթութենէն, նախագում պիտի ըլլայ հասարակութեան վերակենդանութեան և նաեւ վերականգնումին։

Այս փափաքելի վախճանին համեմատ համար ձեռնուող օգնական պիտի ըլլայ նորընտիր Տեղապահ՝ Արհի. Օգոստինոս Արք. Սայեղեան, իր զգօնութեամբ, իմաստութեամբ և աստուածապաշտ եռանդովը. նա՛ որ իբր Կրօնական ժողովոյ ընտրելին և հաւանութեամբ Կառավարութեան կարգուեցաւ այս կարեւոր և ծանր պաշտօնին։ Մինչդեռ մէկ կողմանէ հոգեւոր իշխանութիւնը պիտի աշխատի մեր սուրբ կրօնքին յառաջդիմութեան, աստուածապաշտութեան բարգաւաճումին և բարեկարգութեան պահպանման, միւս կողմանէ Արհի. Տեղապահը՝ օրինաւոր պայմաններով և իր սահմանին մէջ, հասարակութեանս աշխարհային գործերը, առկա խնդիրները, կենսական չահերը պիտի կարգադրէ ու պաշտպանէ Օսմ. բարեացակամ Կառավարութեան օմտ, եռանդնալից ու աշխուրջ շրջահա-

յեցութեամբ, օգնական ունենալով օրինաւորապէս նշանակուած ու ընտրուած ժողովներ, խնամակալութիւններ, հոգաբարձութիւններ, թաղականութիւններ։ Եւ այսպիսի բարեկարգ գործունէութեամբ պիտի անհետանայ չարին որոմը. ամբողջ հասարակութիւնը ո՛չ թէ ինքնասաց շինծու՝ այլ ճշմարիտ, անկեղծ և պարտաճանաչ յարգութեամբ և անպայման հնազանդութեամբ պիտի վերաբերուի առ Ս. Գահն Հռոմայ, ուր կը բազմի Քրիստոսի Տեառն մերոյ Փոխանորդը, Սուրբ Եկեղեցւոյ տեսանելի Դուխը և անսխալ Վարդապետը, որ՝ այլուստ, միշտ բարեբարն եղած է նաև մեր հասարակութեան։ Այսպէսով Կաթողիկէ հասարակութիւնս պիտի վերստանայ ցանկալի խաղաղութիւն և պիտի տեսնէ իր անդորրութեան օրերուն վերանորոգուած նախանձելի երջանկութիւնը։

Ի՛նչ կարեւոր բաներ կան ընելու, փոխանակ անիմաստ և յանցաւոր հակառակութեան։ Մինչեւ հիմա գործուած աւերները պէտք է վերանորոգել. ժամանակիս անհրաժեշտօրէն պարտադրած պիտոյքները հոգալ. հասարակութիւնս ղետեղել իր նախկին պատուաւոր տեղը, ամենուն նախանձելի դարձած վիճակին մէջ, որ մէկ կողմանէ Հայ միտքը և Հայ մատենագրութիւնը աշխարհիս առջեւ փառաւորած ատեն, միւս կողմանէ ալ Արեւելքի մէջ անվահեր և նշանաւոր առաջնորդ կ'ըլլար կաթողիկէութեան։

Յիրաւի, ի՛նչ կարեւոր բաներ կան ընելու։ Կա՛յ դաստիարակութիւնը, բայց լաւը, ուղիղը, ըստ Աստուծոյն, կաթողիկէ դաստիարակութիւնը. անիկայ ա-

մենամեծ և ամենակարեւոր հարցն է այսօր, որ կ'արժէ թէ զբաղեցնէ ամենքս ալ, եկեղեցական թէ աշխարհական. ինչ ջանք որ ըլլայ, որչափ զոհողութիւն որ չինսպուի անոր համար, արժան է և իրաւ. ան պիտի վերակազմէ զմեզ, և արեւելքի մէջ մեզի սահմանուած յառաջդիմութեան փառաւոր պաշտօնը կատարել պիտի տայ մեզ:

Կա'յ եկեղեցականք արեկարգութիւնն ալ, որ բարեյաջող շրջանի մը մէջ կը մտնէ այժմ Բահանայապետական Իշխանութեամբ հաստատուած՝ որով և մեզի եկեղեցական Օրինագիրք եղած Որինհոդոսով, որ ռահվիրայ է ամէն տեսակ բարեշրջումի. կրօնքի ծաւալումը, գործադրութիւնը և փառաւորութիւնը՝ առհաւատչեայ. գրաւական է անշուշտ յառաջդիմութեան, քաղաքակրթութեան և ժողովրդոց երջանկութեան:

Կա'յ ուղիղ, անաչառ մատակարարութիւն ազգային ստացուածոց ու եկեղեցեաց եկամուտներուն, չմատնելով զանոնք այս ինչին քմահաճոյքին, այն ինչին շահագրիտութեան, չռայելով զանոնք ապօրինի և գայթակղեցուցիչ հրատարակութիւններու, այլ անկողմնակալ ոգով հսկելով անոնց վրայ, որպէս զի պարկեշտութեամբ յանձանձուին և ռոշեալ ժամանակի մէջ անհրաժեշտօրէն սահանջելով անոնց հաշուետուութիւնը. ի մի բան՝ ազատելով զանոնք կորստենէ և ապահովելով անոնց անգադար բարեխառութիւնը:

Կա'ն վերջապէս ժողովրդեան ամէն կերպ պիտոյքը, այս գծուար ժամանակներու մէջ. աղքատներ, կարօտներ, լքեալներ, որբեր, որոնք անփշական պէտք ունին բարեբար, զթամ ձեռքերու, գո-

րովալիր սրտերու. անոնց արցունքները պէտք է սրբել, օգնութեան հասնիլ, փրկել զանոնք կորստեան գահաւանդէն:

Ահա ո՛ւր պէտք է դիմէ կաթողիկէ ազգասիրութիւնը և ճշմարիտ կաթողիկէներու եռանդնոտ գործունէութիւնը, եթէ կ'ուզուի արժանաւորապէս ազգասէր ծառայութիւն մը մատուցանել մեր խեղճ հասարակութեան, որ այնքան տառապեցաւ հանապազ:

Կը մաղթենք որ Աստուած յաջողութեամբ պսակէ այս մխիթարական ակնկալութիւնները, ի սիրփանս ամէն անոնց, որոնք ա'յնչափ ճշմարիտ ազգասէր են, որչափ աւելի անկեղծ ու եռանդուն կաթողիկէ:

ՀԻՆ ՎԱԽԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Պ Ի Ր

ՄԵԾ ՀԱԼԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՍԻՑ ԴԵՄ

1829 3 Յունուարի մէջ

(Շար.)

9. Բշ. — Աս օր բապուճի Ամէտ պէյը խաբտան բաշա ըլլալովը տէրութեան սէյլիկ նաւերը առաւ, Սեւ ծով ելաւ:

Եւ հայք գաղտուկ կրկին էզմը հրեայ միլլետեցին, հրեայք իմացան աս բանս, քանի մը ազգին մեծերէն գացին Պէզեհան Յարութիւնին, զէրէ աս եղածներուն մէջը Պելի Չէլէպօնին թողը կար. գացին զասի ուղեւու. ըսին հրեայք. Էֆէնտիմ, քէրէմ ըրէք, աս տղան հօրը մէկ հատիկ գաւազն է, հարը ծեր է. չատ քէտէր կ'ընէ կոր տղուն համար, ինչայթ ըրէք, ուր տեղ պահերին նէ թող տան, զէրէ հարը տղուն պատճառաւը կըրնանք ըսել պէլքի կը մուռնի. Պէզեհանը կ'ըսէ. Ինծի ինչո՛ւ եկեր կ'ըսէք կոր, ես չեմ

խառնուիր . ինծի ըսելնուդ գացէք թագաւորին արգուհալ տուէք ըսելով ճամբեց , Հրեայք մոռածեցն թէ ի՞նչպէս ընենք . ինտրէֆ Մէհմէտ բաշային ստակ բռնողը հրեայ ըլլալով , դասի ձեռվընին էր , հրեայք բաշային դուռը արգուհալ տուին , տէրութիւնը կանչեց հայոց վէթիւր ըսաւ . Ի՞նչ է աս բանս որ կ'ընէք կոր : Վէթիւր ըսաւ . ինչպար չենք , էֆէնտիմ , Դուռը ըսաւ . Երկու ազգը մէկ մէկու ձգէք պիտոր : Ըսաւ վէթիւր . էֆէնտիմ , մենք խապար չենք , թասիհ ընենք ով որ աս բանս ըրեր է նէ ազգով թէքտիր կ'ընենք : Ասուր վրայ հայք խորհուրդ ըրին , կէօաքանի մը տէրտէրով և քանի մը աշխարհականով ըրեր են , ազգը խապար չունի ըսելով , աս տէրտէրներուն և աշխարհականներուն ամէն մէկին ճամբու խարճը տուին , պատրիարքի արգով աքսորեցին Արմաշ եւ Պրուսա :

13 Գշ . — Աս օր տէրութիւնը պզտիկ նաւով մը Չանախ խալէսին մէյմանտար խաւրեց , Ֆրանսըզի ու Ինկիլիզի դեսպանները հրաւիրելու համար :

23 Եշ . — Հալէպցի Հաճճառ ուզուն Եոսուֆը իր տունէն վերուցին , միւղիւր աղան բանտը դրին . տէրութիւնը Եոսուֆին խըզմէթ ըրած մարդիկներէն երկու հոգիի զոխ կտրեց , Բարմախ խաբուն դրաւ . ասոնք երկու եղբայր էին . մէկին զոխը Հալէպ կտրեցին թերին հոս , մէկին ալ հոս կըտրեցին . Եոսուֆն ալ ասոնց խըզմէթ ընելով յանցանքի տէր եղաւ , ուրիշ բան չէր : 25 Եթ . օրը աքսորեցին Սօֆիա . Եոսուֆին յանցանքը աս էր . Հալէպցի ըլլալով հայք ոխ ունէին Հալէպցոց վրայ , իրենց բանը ուղածներնուն պէս կարող եղան ընելու . ասուր համար աքսորել տուին զասի , միւսներուն յանցանքն ալ աս էր , փէք հարուստ էին , ստակնին եղաւ իրենց յանցանքը :

24 Ուր . — Հայք պատրիարքարանը խորհուրդ ըրին մկրտուած հրէից վրայօք , ամիրայք ըսին քի հրէից լեզուէն և տէրութեան ձեռքին աղատելու համար դուրս ձգենք զասոնք , թող երթան ինչ կ'ընեն նէ ընեն : Պատրիարքը կ'ըսէ . Զըլլար աստնկ բան , ի-

րաւ տէրութեան ըսինք քի մենք խապար չենք , բայց մենք ամէնքս ալ գիտէինք մեր հրամանովը մկրտեցին . հիմա դուրս ձգենք . հրեաները զասոնք ձեռվընուն ձգածնուն պէս ամէնքը զայ պիտոր ընեն , յետոյ Աստուած ասոնց արիւնը մեզմէ կը հարցնէ ըսելով մէն ընել տուաւ :

Հրեայք շատ տաքցան հայոց վրայ , գացին թագաւորին արգուհալ տուին , թագաւորն ալ ձեք դրաւ արգուհալին , բաշային դուռը խաւրեց նայլի աս բանս ըսելով :

2 Յունիս կիր . — Հայք ամէն իրենց եկեղեցիներուն մէջ ծանուցում ըրին քի հայոց ազգը չըլլայ թէ հրէից հետ առուստուր ընէ , հէքիմ , էզաճի , կամ տայէք չըլլայ քի տուներին մոտնէ և ով որ կ'ընէ նէ կը պատժուի ըսելով :

3 Բշ . — Այսօր հայք իրենց վրայօք մեծ խորհուրդ ըրին . վէթիւ վարդապետը քանի մը անգամ դուռը քնաց , յետոյ ամիրայք խաբար տուին ելան զացին դուռը ընթիւ էֆէնտիին , որք են այսոքիկ . Վէթիւր , Պէղճան Յարութիւնը , Ազնաւոր օղլը սարաֆլար քեհեհասին , Բիշմիշ օղլը Միքայէլը , Բաբազ օղլը Ճանիկը , Գրիգոր իմալխանը , պարութանէլի Սիմէոնը , Կէլկէլ օղլը հաճի Պողոսը , 11 հոգի հրէիցմէ մկրտուած Պէյօղլու տան մը մէջ պահեր էին հայք . տէրութիւնը ուղեց աղգէն զասոնք :

Ամիրայք և վէթիւր չիտակ ընթիւին առջին ելան , ընթիւ էֆ . հարցուց ասոնց . Ի՞նչ բան է աս եղած բաները . ամիրայք ըսին . էֆէնտիմ , ասոնք հազրէթի Խալային գալը ընդունեցան , բայց իրենք հրեայ են ազգաւ : Ըսաւ ընթիւր . Լսեցի քի ասոնց դուք շատ ստակ , տուն տեղ ու նաեւ սղջիկ ալ ոլիտի տաք եղեր : Ամիրայք ըսին . ինչ էֆ . իմ , ասանկ բան չիկայ . հարցուցէք իրենց . հայք մկրտուած հրեաները կարթացուցեր էին քի մենք ինչ ըսենք նէ դուք ալ անանկ ըսէք տէյի : Կրկին ընթիւր հրեաներուն հարցուց , ի՞նչ կ'ըսէք դուք տէյի . նմանապէս ասունք ալ ամիրայից ըսածին պէս ըսին . ընթիւր սրդողելով ըսաւ . ամիրայք հոն նստած ի՞քէն , հէլէ զասոնք միւղիւր աղան բանտը տալէք :

յետոյ կը նայինք . տարին մկրտուած հրեաները բանտը դրին , ամիրայք անկից ետ դարձան :

6 ԵՃ.—Փրանսըզի և Իսկիլիզի դեսպաններուն համար տէրութիւնը նոր առնուած վաքօրը խաւրեց հրամցնելու համար զան տէյի . աս օրուան օրս իրենց պէյլիք նաւերովը եկան՝ երկու դեսպանը և իրենց ֆամիլիան ալ միատեղ , երեք պէյլիք նաւ Փրանսըզին , երեք նաւ իսկիլիզին . կը լսենք կոր քի տահա պէյլիք նաւ պիտի գայ տէյի . և աս իւրիկուն իրենց նաւին մէջ թօփխանային առջին պառկեցան :

7. Ուր. Աս առտու տէրութենէն մարդ գնաց դեսպաններուն հրամցնելու համար , երբոր Փրանսըզի դեսպանը իր նաւը մտաւ նէ իր պէյլիկէն ֆրէնկի սագեր պաշլայվիցաւ ջալվիլ , գնաց իսկիլիզի նաւին առջին , իսկիլիզի դեսպանն ալ իր նաւը մտաւ նէ անուր նաւէն ալ անանկ չալվեցաւ , յետոյ եկան Թօփխանան ելան , ձիով իրենց սարայները դացին :

Այս օր մկրտուած հրեաները իրենց աղգին հետ մուտաֆա պիտի ըլլային բայց չեղաւ :

8 ԵՐ.—Միւզիւր աղային բանտը եղող հրեաները և քանի մըն ալ դուրսը կայ եղեր հայ ըլլալու ամէնքը 11ի չափ , տէրութիւնը զասոնք հայոց պատրիարքին խաւրեց , պատրիարքն ալ զասոնք Ղայսէրի վանքն աքսորեց , հայոցմէ ալ քանի մը վարդապետ և աշխարհական միատեղ աքսորեցին Ղայսէրի և ասկից առաջ ալ կէնէ աս բանիս համար քսանէն էվէլ աշխարհական և տէրտէր և տիրացու աքսորեցին Իզնիմիտ , Պուրսա , Արմաշ , կէօյա ասոնք են եղեր ընողները . բայց խապահաթը աքսոր գացողներուն չէ , էյէր ստոյգ խապահաթըն աքսորվելու ըլլար նէ , առաջինը պատրիարքն էր , երկրորդն ալ Պէզճեանն էր , նմանապէս մէկալնոնք կարդաւ աքսորուելու էին :

Այսօր տուն ծախուելու պատճառաւ , պատրիարքէն ժամկոչ մը կ'երթայ Սանուս Պօղոսին զոքանչը կը բռնէ , տիմսէք մուշտայ զարնելով ու նաւ ըսելով , էլլէններուն կիւ-

վէնմիշ կ'ըլլայիք , կիւվէնտիյինիզ աղաճըն տալլարը էլլինիլտէ գալտը . երբիւ կ'տէլիմ կ'ըսէ , առջեւը կը ձգէ . կը պաշլայէ տանիլ , ճամբան էրիկը բաստ կու գայ , կնիկը թող տալ կու տայ , ինք անոր տեղը պատրիարքարանը կ'երթայ , հոն ալըխովիշ կ'ընեն . յետոյ ասոր աղան կ'երթայ , Պէզճեանին կ'աղաչէ , անոր թէղքէրէ մը կու տայ թող տան տէյի , անով թող կու տան , աս արալըխ մէկ գալըմ մըն էր ըրին , նայինք ետքը :

13 ԵՃ.—Այսօր սուրբ Անտոն ժամը կիւլ բանայրի ըրին ֆրէնկները , շատ խալապալըխ եղաւ , ամէն աղգէն սէյիրճի , և խալապալըխին մէջը տէրտէր մը կար , ֆրէնկները լաւ մը ծեծեցին զասի , և շատ ալ աշխարհական հայերէն սէյիրճի տէյի եկեր էին , զասոնք ալ ծեծեցին :

Աս բանիս ստոյգը հիմա լսելու համար պէտք եղաւ հոս գրելու , որ կարթագողը տեղեակ ըլլայ :

Ստամպուլի մէջ հալածանքը պաշլայվելուն պէս , առաջին աքսորուողները էնկիւրցիք եղան չօլուխ չօճուխով , հոռի պատրիարքը անիտէ կոնդակ կը խաւրէ , իրենց ամէն առաջնորդներուն ըսելով ու թէնպիհ ընելով , նայեցէ՛ք , օրհնեալ զաւակներս , Ստամպուլէն քաթօլիկի անուամբ հայեր աքսորուին պիտոր Անատօլույի կողմերը , դուք որ իմ գաւակներս էք եւ ես որ ձեր աղգին պատրիարքը գտնուելովս ձեզի կը հրամմեմ , աս գալու եղող քաթօլիկները ինչպէս որ պէտք է նէ ուր տեղ որ ըլլայ նէ աղէկ նայիք և ձեռքերնէդ ինչ որ աղէկութիւն կու գայ նէ անոնց ըրէք : զէրէ Աստուծոյ համար աս սէֆիլութիւնս կը քաշեն կոր , պէտք է որ մենք ալ Աստուծոյ համար զասոնք նայինք , աս թէնպիհս պահելուդ և ընելուդ համար ձեր վրայ կապանք կը դնեմ , ով որ հոռոմ է նէ պարտական ըլլայ ընելու եւ ընողն ալ օրհնեալ ըլլայ ըսելով կը վերջացնէ են . :

Աս բանիս սպաթը աս է քի , ամէն տեղի հոռոմները աքսոր գացող քաթօլիքներուն շատ աղէկութիւններ ըրին , տեղ չունեցողին տեղ տուին , ստակ չունեցողին ստակ տուին , տէր չունեցողին տէր կեցան , ամէն թիւր-

լիւ նայեցան, ինչպէս որ ամէն մարդ կը վկայեն կոր ըրած ազէկութիւննին, քեզի մէկը նախը ընեմ, խուսուորն ալ անկից հիսապը տես:

Էնկիւրցիին մէկը աղքատ եօլլու ըլլալով չօլուիս չօճուխով շիտակ Իզնիսիտ կ'երթայ, անկից ալ Էնկիւրիւ երթայ պիտոր, բայց ստակ չունի քի չօլուիս չօճուխը տանի, ճամբայ ելլայ նէ ձուռն ձմեռին հարկաւորապէս ճամբան պիտի մնան. աս մարդս կը մտածէ չօլուիս չօճուխը հոռմի տուն մը կը ձգէ, կ'ըսէ քի ես կ'երթամ. ձեզ սօնրա կու գամ կը տանիմ: Ան մարդը կ'երթայ անտէր կը միան ասոնք. հոռմիները կը նային քի պաւսլընեւրը անօթի ծարաւ պիտի մեռնին իմացիք են քի չբաւորութենէ աս մարդը օլուիս չօճուխը թողոցներ փախեր է. իրենց ժամուն մէջ ասոնց համար թապախ կը քալեցնեն, ստակ կը ժողվեն, զասոնք կը նայեն ինչպէս որ պէտք է նէ և ասոր պէս շատ բաներ ըրին հոռմիները:

Քանի աս հալածանքը հայերը որ ըրին, հոռմի ազգը հայու ազգին Արիտս կանչել պաշլայեցին:

Ոռույումճիներուն միւթէվէլին Էնկիւրիւ աքսորուեր էր, իթլախ եղաւ:

24 Բշ.— Այսօր նոր եղած ինկիլիզի դեսպանը եպարքոսին դուռը գնաց մեծ ալայով. չիւնքի դեսպանը պէյլիի նաւով գալուն համար հետը չալը ունէր, Պէյօղլուէն մինչեւ դուռը, իր Ֆրէնկի չալըններովը և սիւնկիւրիւ թիւֆէնկով, 42, 52 սօլտաթով, սօլտաթներուն գլուխը երկայն թիւյերով և շատ բազմութիւնով գնաց, տէրութեան կողմանէ ալ չալուչ պաշին ձիով չորս հարիւրէն աւելի մանուորի ձիավորք, թազլում մը դրան չալուչներ, միլիանտարը, ձիաւոր զօրքերուն ձեռքը մէյմէկ պալրախներ, մէկ թախում մը ասանկ պալրախով, մէկ թախում մը ձեռքընին բաց թուր, ճէպէրնէն վար խարապիւնա կախած, և այլ ուրիշ մարդիկ և զարդարանք շատ, այսպէս դուռը տարին:

Յետոյ դռնէն ետ դառնալուն դեսպանը էլմասլը կոպճալով հարմանի հագած, սրմայով բանած քանի մը տահա ուրիշներուն

այսպէս էլմաս կոպճալը հարմանիներ և ուսրիշներուն պապըսըին սալթ սրմայով, շատերն ալ սալթ չուխայէ էր: Բայց դեսպանին հագածը ամէնէն ծանտրն էր. կրկին չալընով մինչեւ իսկէլէն ինջաւ, չալընեւրովն ինք իր կէմիին Ֆիլիքան հեծաւ, չիտակ իր կէմին ելաւ, ալայը մինչեւ դեսպանին սարայը գնաց, դեսպանին նաւը երթալուն պատճառը աս էր քի հաւան ասուր խիստ տաք ըլլալուն պատճառաւ, ճամբան կարճ ըլլայ տէյի ըրաւ:

Ֆրանսըզի դեսպանը առաջուց դուռը գացած ըլլալուն համար աս անգամին չի գնաց, պէրէ նոր էլչիները կ'երթան դուռը. մէյմը քի ինքը զինքնին ճանչցնելու համար, մէյմըն ալ իր տէրութենէն բերած նամէն տալու համար. աս մարդս աս բաներս ըրեր էր:

Հիմայ պէյքի կ'ըսեն քի ինկիլիզի դեսպանը ինչպէս կարող եղաւ դուռը աս կերպ երթալու:

Երբոր դռնէն տալէթճի գնաց նէ դեսպանին, դեսպանը դրան խապար խաւրեց ըսելով. մուգիպայովս, եանի չալընով, սօլթաթով և ձեռուքնին ալ սիւնկիւրիւ թիւֆէնկով և չալուչ պաշին ալ տոջեւէս երթալով պիտի գամ պիտցած ըլլան, երբոր տէրութիւնը աս կերպովս գալս չուզեր նէ, չեմ իգար: Տէրութիւնը առջի բերան չուզեց դեսպանին այս կերպ գալը, բայց նայեցան քի առ բանս ալ մէկ առիթ մը չըլլայ մեծ լաւն մը ելլալու, անոր համար կրկին հրամայեցնելով ըսին. կամքը ինչպէս է նէ այնպէս թող հրամայէ և դեսպանն ալ այս կերպ գնաց:

Աս միջոցիս մէջ գաղտուկ տէրութիւնը ալաղքի վճարանքներու մէջ Ֆէրման կարթագուեցաւ ըսելով այսպէս խալաթիս եւն. Պէյ օլլուի մէջ ինչ խրտար տուն ասոնոյ այլապէ կայ նէ մինչեւ 25 օր միջոցի մէջ ամէնքը ելլեն տներնէն ուրիշ ազգի քիրայի տան:

(Շարունակելի)

ՍՔԷՅՅԻՆԿ ՎԷ ԹԷՆՆԻՍ

Թէվզի միւքեաֆաթ պիթէր պիթմէզ քէօյէ չըգտըլար :

Բէտէր վալիտէ վէ գըզ տահա էվլէրինի կէզմէզտէն էվվէլ, միսաֆիրլէր կէլտիյինի խապէր ալըրլար : Միսաֆիրլէրի պէքճի Բիէր գարըսը ժազլէն վէ օղուլլարը ժազ տըր :

Պու բէտէր վէ վալիտէ չօճուզլարընըն իսթիգալընըն թէմին իթմլք մագսատըլլա օնը մէքթէպէ կէօնտէրմիշ վէ լաթինճէ տէ էօյրէթմիշլէրտի :

Ժազ պաշընտա տէֆնէ թոճը վէ պօլ-թուզընըն ալթընտա տախի երւզիւ գըրմըզը վէ քէնարլարը եալտըզը միւքեաֆաթ քի-թապլարըլլա տօլու օլարազ մէքթէպտէն ալ-տէթ իթմիշ օլտուզուլտան, բէտէր վէ վա-լիտէ էվլատլարընըն թէրազընըն էվ սա-հիպլէրինէ կէօսթէրմէք իւզրէ օնը կէթիւ-միշ տիրլէր :

— Պօնթուր, Բիէր, նաճըլըն, տէր է-ֆէնտի :

— Պօնթուր, ժազլէն, նաճըլըն, տէր մատամ :

Պէօյլէլիքլէ միւքեալէմէ պաշլար :

Էֆէնտի վէ մատամըն լահանատան, հա-վուճտան, թալթուզտան, տանատան պահա իթտիքլէրի սըրատա, իքի չօճուզլար տա քէնտի արալարընտա գօնուշմազա պաշլար-լար : Հէր իքիսի տէ օն իւշէր եաշլարընտա բարլազ վէ տիրի կէօզլիւ, ճազիպէտար սու-րաթլը չօճուզլար տըրլար :

— Տէմէք օլույօր քի սէն չօզ չալըշմըշ-սըն ժազ, տէր Պօպ :

— Էլիմտէն կէլտիյի դատար չալըշտըմ, եա սէն :

— Պէն մի... պէն օ կիպի շէյլէրէ բէք էհէմմիյէթ վէրմէմ :

Կէնճ Պօպ ալազլարընը պիրի պիրի իւս-թիւնէ գօմուշ քէյֆիճէ օթուրույօր վէ քէօյ-լիւ չօճուզըն հալ ու ալթվարընը միւթէքէպ-պիրանէ սիւզիւյօրտը :

— Հէր նէ տէ օլսա մուալլիմլէրինիզ սի-զի թէքտիր իտիյօրլար օլմալը, տէյիլ մի :

— Թապիի տիր : Սէօզ սրամըզտա, պէն տէ օլուր թէնպէլլէրտէն տէյիլիմ... :

— Պու սէնէ հիշ միւքեաֆաթ ալտընըզ մը :

— Էլպէթթէ, վէ հէմ կիւզէլ միւքեա-ֆաթլար ալտըմ... իլք միւքեաֆաթըմ գը-լըճ օյուլընտան վէ ժիմնաստիքտէն... ի-քինճի միւքեաֆաթըմ աա եումիուզ օյու-լընտան օլաճագտը, ֆազաթ գսպահաթ պէ-նիմ տիր... ալամատըմ :

— Պու սալըշտըրտըզընըզ տէրսլէր եօզ տըր պիզտէ, տէտի ժազ, Պէն թէրճէմէտէն, քիթապէթտէն, իմլատան վէ հէնտէսէտէն միւքեաֆաթլար ալտըմ, Պազընըզ միւքեա-ֆաթլարըմա Մ. Պօպ :

Պօպ կէօզ ուճուլլա պիր աթֆը նազար իտէր :

— Էվվէթ կէօրտիւմ, ֆազաթ պուլար-տան սանա նէ ֆայիտէ :

— Նէ՞ ֆայիտէ մի : Պուլար պէնի թէշ-վիգ իտէրլէր :

— Թէշվիգ իթմէք իլէրի կէօթիւրմէք ի-չուլ պու կիւն պիր թէք պիր շէյ վար տըր :

— Օ նէ՞ իմիշ :

— Հէր հալտէ լաթինճէ տէյիլ տիր, լա-թինճէյէ պու կիւն էհէմմիյէթ վէրէն եօզ տըր... Թէննիս օյուլըն տըր :

— Թէննիս օյուլըն հանկիսի՞ տիր, տէր ժազ հայրէթլէ :

— Էվվէթ, թէննիս իլէ սքէթինկ :

— Սնլայամատըմ :

— Սքէյթինկ տէյօրըմ, ֆազաթ սէն էս-կի դաֆալարտան օլտուզուլտան պուլարը սնլայամազսըն : Պուլարտան սօնրա տա ֆուլթ-պօլ կէլիւ :

— Նէ՞...

— Ֆուլթ-պօլ, չազըն : Տահա հիշ պիր շէյտէն խապէրին եօզ տըր, կէօրիւյօրմուսըն քի ֆրանսըզճա սէօյլէմէյի էօյրէնմէք իլին լաթինճէնին ֆայտէսի եօզ տըր :

Ժազ սիւքիւթ իտէր... պու Պօպըն հա-լինտէն պիր շէյ անլայամազ :

— Սիզ չօզ ալիմսինիզ, էֆէնտի :

— Էօյլէ եա՞, հէմ տանս տա պիլիրիմ, եա... :

Իքի չօգուզլարըն միւքեալէմէսի չիֆթճի Բիէրին օղուլըն չազըրմասը իւզէրինէ միւն-գաթի օլտու :

— Ժագ, հայտէ օղլում, էֆէնտիյէ ա-
տիէօ տէ՛ տէ Ժողովրդապետ էֆէնտիյի կէօր-
մէյէ կիտէլիմ:

Պու իւչ քէօյլիւ միսաֆիրէրին կիթտիյի
սըրատա, ֆաթիլեա էֆրատը քէնտի արա-
լարընտա պէյսնը միւթալէա էսիյօրլարտը:

— Պու գատար գապա պիր չօճուղը օ-
գութմասը տիվանէլիք տիր, տէյօրտը է-
ֆէնտի:

— Աճէպա իլէրիտէ պէօյլէ պիր չօճուղը
նէ՛ հաքապիլիլէր, տէյօրտը մատամ:

— Եա ճահիլլիյինէ հիչ պիր տէյէճէք եօգ
տըր, տահա թէննիս, սքէյթինկ, ֆութ-պօլ
քէլիմէլէրինի պիլէ անլամայօր, տէյօրտը Պօպ:

* *

Զիֆթճիլէր վարդապետանոցըն գարուսը-
նը չալար վէ Ժողովրդապետ էֆէնտի թա-
րաֆրնտան գապուլ օլունուրլար:

Վարդապետ Ժագըն սէնասընտա պուլու-
նըր, վէ հոգեւոր, չալըչկան, թէրպիյէլի,
սատէ օլտուղընը թաատիկ իտէր:

— Բիէր, ինչալլահ պու չօճուգ իլէրի
կիտէր:

— Ինչալլահ, վարդապետ էֆէնտի:

— Էվ սահիպլէրինիգի կէօրմէյէ կիթտի-
նիգ մի:

— Իլք գիյարէթիմիգ օ օլտը:

— Աֆէրին ագիլլէրիմ, պօրճընըգ տա օ
տըր: Է՛ Ժագ, օղլում, Մ. Պօպ իլէ տէ գօ-
նուչտըն մը:

— Էլվէթ, վարդապետ էֆէնտի:

— Օ տա միւքեաֆաթ ալմը՛չ մը:

— Էվվէթ. վարդապետ էֆէնտի, գըլըճ
օյունընտան, Ժիմնասթիքտէն պիրէր միւ-
քեաֆաթ ալմըչ. եումրուգ օյունը միւքեա-
ֆաթընտա տա աֆսէսիք ալմըչ:

— Եումրուգ վէ գըլըճ օյունլարընտա՞ն
մը, եա՛ Րապիլի, եա լաթինճէտէն հիչ պիր
չէյ եօգ մը:

— Էլվէթ, վարդապետ էֆէնտի, տահա
պիր գաչ իսիմէր վէրտի քի անլայամատըմ,
պէլքի բումճա իտի:

— Սքէթի՛նկ մի տէտի:

— Թէմամ, վարդապետ էֆէնտի:

— Հէր հալտէ թէննիս իսմինիտէ վէր-

միչ օլմալը տըր:

— Էվվէթ օ իսմի տէ սէօյլէտի խաթ-
րմա կէլիյօր:

Վարդապետ կէօղլէրինի կէօյլէրէ տօղրու
գալտըրարագ ա՛հ չէքիյօրտը:

— Զալալլը՛ չօճուգ, տահա տօղրուսը,
պէտպախթ անա պապա, տէյօրտը:

— Բիէր, Ժագին վէ Ժագ պիր չէյ ան-
լայամայարագ վարդապետին եիւզիւնէ պա-
գըպ տուրույօրլարտը:

— Իհթիմալ սիգ պու իսիմէրտէն պիր
չէյ անլամայօրսընըչ, տէտի վարդապետ,
թէննիս, սքէյթինկ, ֆութ-պօլ, պունլար
օյունլար տըր, էյլէնճէլէր, վազըթ կէչիրէ-
ճէք պօչ շէյլէր տիր...:

— Էօյլէ իտէ Մ. Պօպ չալըչմայօր մը,
տէտի Ժագ հայրէթլէ:

— Խայըր, էվլատըմ:

— Էպէվէյնի նիչին օնը իճպար իթմէ-
յօրլար:

— Էպէվէյնի՛ մի. էպէվէյնի՛ մի, տէտի
վարդապետ ա՛հ չէքէրէք. օնլար տա քէնտի
քէնտիլէրինի ագընթըյա վէրիյօրլար: Զէն-
կիլիլէր ալէմինտէ պու կիւն գանն օլունու-
յօր քի իսթիգպալը թէմին իթմէք, իլէրի
կիթմէք իչուն Ժիմնաստիք, տանա, թէն-
նիս վէ սայիրէ պիլմէք քիֆայէթ իտէր:

Սօնրա, վարդապետ սէսինի եիւքսէլտէ-
րէք տէտի:

— Ժիմնասթիք, սրօր, օյուն վէ էյլէն-
ճէլէր պիր իչէ եարամագլար. գէմանըմըգտա
էպէվէյն քէնտի էվլատլարընը պու կիպի
չէյլէրլէ թէճհիլ իտէրէք միւպարէգէյի հա-
յաթա սալը վէրիյօրլար: Հէյհաթ, պու սի-
լահլարլա անճագ ըիւյա ալէմինտէ իհրագը
ղալէպէ իտիլէպիլիլը վէ այնի գէմանտա,
ճիտտիլէթլէ միւճէհէզ օլանլար թէմինի
մուգաֆֆարիլէթ իտէրլէր...:

«Աֆէրին, Ժագ, գիհնիի իլմիլէ տօլ-
տուրտըղընտա պէօյլէք ագըլլըլըգ եարմըչ
օլույօրսըն...»

«Արսլան իլէ սիվրի սինէյին մասալընը
տէր խաթըր իտիյօրմըսըն... այնի հալ հէր
կիւն իչիւն թէքէրիւր իթմէքտէ տիր.
արսլան թէչպիհ իտիլէն գուվլէյի պէտէնիյէ

զէվահիրի անվալ, հէր կիւն իշիւն սիւրի սինէք հիւքմիւնտէ թուրուլան ֆիքրի թէ- շէպպիւս, իւմ... թարաֆընտան մաղլուպ իտիմէքտէ տիրոյ»

«Ահ, ֆիքիր, ֆիքիր... պաշտապիր բարչա ֆիքիր օլմալը, գալպաշ մէթին գա- նաթլար պուլընմալը, իշթէ պու սայէտէ տիւնտայը ֆէթհ իթմէք... սքէյթինկ, թէն- նիս, տանս գահրամանլարընը մաղլուպ իթ- մէք դապիլ օլուրոյ»

«Կիւն կէլէճէք քի Պապըն էպէվլինի եանըմը օլտուգլարընը անլայաճաք վէ քէն- տի քէնտիլէրինէ տէյէճէքլէր. «Եանըմը- չըղ...» Իշթէ պու կիւն քէնտի էլլէրիլէ, պիր կիւն ինքայի հիւքիւմէթ իտէճէք օլան թաթըն թէմէլլէրինի թաթիւլ իտիյօլարոյ»

* *

Պու աղըր քէլափար իւղէրինէ միւթէ- սիր օլարադ միւֆարադաթ իտէն չիֆթճի այիլէսի կիթաիքտէն սօնրա, ժողովրդապետ քէնտի քէնտիինէ չու միւթալէայը իտի- յօրալը.

Ինսան էօմրիւնիւ պիր օլուն թօրը կիպի աթաճադ օլուրսա, չըզկըտան չըգաճաղընա, վէ բաթէն թէքլէրինին իւղէրինտէ տօլաշ- մաղա ալըլըրսա, հէր հալտէ պաշը ալճուիւպ- տէ միւպարէզէյի չայաթտէ պիր կիւն բէրի- շան սուրէթտէ տիւշէճէյինէ չիւպհէ իթմէ- մէլի:

ԵՕԹՆԵԱՎ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՀԱՂԵՒՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ
„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԹԷՆ

Դիւլ Ա.—Դլ. ԽԻ. —Դասասանի եւ մեղաց պատիժ.
ՈՅՐԱՆՈՎ ՎՐԱՅ:

(Շար.)

Պիտի չգտնուի մոլորիւն մը՝ որ յունեկայ իրեն յատուկ անցանքը:

Հոն հպարտներն ամեն ամօրով պիտի շնորհին, եւ ազատները ամենաքաջաւ կարօտութեամբ պիտի ծառա- պին:

Հոն պատժոյ մէջ ժամ մը աւելի ծանր պիտի ըլ- լայ, քան հոս հարիւր տարի՝ ամենաճանր աշխատե- րեան մէջ:

Հոն դասապարտներն յիսյ յունա հանգիստ մը, միսիրարտիւն մը. միւնդիւն հոս երբեմն դադար կ'ըլ- լայ աշխատութիւններէ, եւ կը վայելեմք քարեկամաց սիրտիւնը:

Հի'մա հոգ ըրէ ու զոյոս մեղսերուդ վրայ, որպէս զի դասասանի օրը սպասեմք ըլլաս երանեալներու հետ:

Որովհետեւ ան ասեմք աղապարս մեծ համարձակու- րէամբ պիտի կենան՝ իրենց նեղաց ու զրկողներուն զիմացը:

Ան ասեմք դասերու պիտի նստի այն մարդը, որ հի- մա խոնարհաբար կ'ենթարկի զիմքը մարդոց դասա- աններուն:

Ան ասեմք մեծ վստահութիւն պիտի ունենայ աղապար- ար խոնարհը, եւ հպարտն ամենուս պիտի զարհուրի:

ՍՈՒՐԲ ԲԵՌՆԱՐԻՈՍ. ՎԱՐԴԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ

